ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 744-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» N 744-Ն որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2.Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանափոխել ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Նորայր Մուշեղյանի անվամբ՝ «Նորայր Մուշեղյան փողոց»»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 744-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 744-Ն որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանակոչվել է բանաստեղծուհի, հասարակական գործիչ Արմենուհի Տիգրանյանի անվամբ՝ «Արմենուհի Տիգրանյան փողոց»:

Ներկայումս Արաբկիր վարչական շրջանում կա Նիկողայոս Տիգրանյան և Արմենուհի Տիգրանյան փողոցներ, որոնք բնակչության շրջանում առաջացնում են տարընկալում և անհարմարություն, ինչպես նաև շփոթության տեղիք են տալիս:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանակոչել ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Նորայր Մուշեղյանի անվամբ՝ Նորայր Մուշեղյան փողոց»:

Նորայր Մուշեղյանը ծնվել է 1935 թվականի նոյեմբերի 2-ին, Երևանում:

Նորայր Մուշեղյանը 1957 թվականին ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը:

1968 թվականին մարզել է ազատ ըմբշամարտի ԽՍՀՄ օլիմպիական հավաքականը:

1971-1974 թվականներին եղել է Աֆղանստանի ըմբշամարտի ազգային օլիմպիական թիմի մարզիչ:

Նորայր Մուշեղյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

1961 թվականին նրա պատվին հիմնադրվել է ըմբշամարտի հանրապետական մարզադպրոցը, որը երկար տարիներ ղեկավարել է:

Նորայր Մուշեղյանին շնորհվել է վաստակավոր մարզչի, ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի պատվավոր կոչումներ, եղել է ԽՍՀՄ-ի և Աֆղանստանի հավաքականների ավագ մարզիչը: Արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների և բազմաթիվ այլ պարգևների:

Նորայր Մուշեղյանը մահացել է 2011 թվականի դեկտեմբերի 23-ին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N744-Ն որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2.Երևան քաղաքի Արաբկիրի 41-րդ փողոցն անվանափոխել ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Նորայր Մուշեղյանի անվամբ՝ «Նորայր Մուշեղյան փողոց»»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ